ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թվականի հոկտեմբերի 19-21-ը ք. Մինսկ

(Բելառուսի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սուրեն Կարայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 19.10.2017- 21.10.2017

4. **Հրավիրող կողմը**

Բելառուսի Հանրապետության անտառային տնտեսության նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակության մասնակցությունը Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի աշխատանքներին

6. **Քննարկված թեմաները**

Արձանագրության մեջ շեշտադրվում է երկու երկրների համագործակցության ներուժը առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, առողջապահության, մշակույթի, կրթության և գիտության, արտակարգ իրավիճակների ոլորտներում, ինչպես նաև երկու երկրների մարզերի միջև համագործակցությունը: Կարևորվել է Հայաստանի և Բելառուսի միջև ապրանքաշրջանառության ավելացման, փոխշահավետ ծրագրերի իրականացման, հարկային, մաքսային և համագործակցության, բոլոր այլ ոլորտներում ընթացակարգերի դյուրացման ու կանոնակարգման համար ԵԱՏՄ գործիքակազմի ակտիվ օգտագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև արդյունաբերական կոոպերացիայի ոլորտում

համատեղ ծրագրերի իրականացման ակտիվացման նպատակով «Մեղրի» ազատ տնտեսական գոտու հնարավորությունների լիարժեք օգտագործումը:

Կողմերը գոհունակությամբ նշել են, որ իր բովանդակությամբ և հագեցվածությամբ 13-րդ նիստի արձանագրությունը տարբերվում է նախորդ նիստերից՝ ավելի մեծ հնարավորություններ ստեղծելով առևտրատնտեսական ոլորտում երկու երկրների հարաբերությունները զարգացնելու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Ս. Կարայանի գլխավորած պատվիրակության հանդիպումները ԲՀ արդյունաբերության նախարար Բ. Վովկի, ԲՀ էկոնոմիկայի նախարար Վ. Զինովսկու, ԲՀ անտառային տնտեսության նախարար Մ. Ամելյանովիչի հետ:

Հանդիպումների ընթացքում կողմերն ընդգծել են, որ երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները չեն համապատասխանում երկու պետությունների իրական ներուժին: Հատուկ ուշադրություն է դարձվել ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ համագործակցության և դեպի երրորդ երկրներ արտահանման հարցերին: Կողմերը քննարկել են նաև Մեղրու ազատ տնտեսական գոտու շրջանակներում համագործակցության հնարավորությունները, մասնավորապես գյուղատնտեսական տեխնիկայի արտադրման հնարավորության հարցը:

Քննարկվել են Բելառուսում արտադրվող և Հայաստան մատակարարվող տրանսպորտային, գյուղատնտեսական տեխնիկային առնչվող հարցեր, նաև արծարծվել է դրանց ադապտացումը հայաստանյան պայմաններին: Պատվիրակությունների հանդիպման օրակարգում էր նաև հայ-բելառուսական գործարար համաժողով կազմակերպելու հարցը, որը կխթանի երկկողմ տնտեսական հարաբերությունները:

ԲՀ անտառային տնտեսության նախարարի կողմից առաջարկվել է անհատույց Հայաստանին տրամադրել սոճիների տնկիներ 15 հեկտար հողատարածքի համար: Պայմանավորվածության համաձայն, մինչև ս/թ նոյեմբերի վերջ Երևան կգործուղվեն բելառուս փորձագետների խումբ՝ սոճիների պարկի համար հատկացված հողատարածքները հայ մասնագետների հետ ուսումնասիրելու և համապատասխան առաջարկներ ներկայացնելու նպատակով:

Նախարարներ Կարայանը և Առաքելյանը հանդիպել են նաև Բելառուսի գյուղատնտեսության նախարար Լեոնիդ Զայացի հետ՝ քննարկելով խոշոր եղջերավոր անասունների բազմացման և սերմնաբուծության ոլորտում երկու երկրների համագործակցությունը:

Նախարար Կարայանը հանդիպել է ԲՀ զարգացման Բանկի տնօրենների խորհրդի նախագահի հետ, որի հետ պայմանավորվածության համաձայն, առաջիկայում

կնախապատրաստվի և կստորագրվի համագործակցության հուշագիր “ՓՄՁ ներդրումներ” ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ:

Նախարար Կարայանը հանդիպել է նաև “Կորոնա” ցանցի սեփականատիրոջ հետ, որի հետ քննարկվել են ցանցում ՀՀ արտադրատեսակները ներկայացնելու հնարավորությունները: Ձեռք է բերվել պայմանավորվածություն ապրանքների նմուշները ԲՀ ուղարկելու վերաբերյալ, որից հետո կներկայացվեն բելառուսական կողմի պահանջարկի ծավալները:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նիստի արդյունքում ստորագրվել է նիստի արձանագրությունը և ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները:

Պատվիրակության կազմում էին նաև գործարարներ Հայաստանից, որոնք տեղում գործարար կապեր են հաստատել բելառուս գործընկերների հետ, ճշգրտել հետագա համագործակցության հեռանկարները:

9.Գործուղվողը

Սուրեն Կարայան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

07.11.2017թ.